Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

9 771829 252000 19045

Տպագրվում է 1990 թվականից

45 (1444) • 29 նոյեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ



# 02 Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Արման Սարգսյանը ներկայացրեց ոստիկանության պետի նորանշանակ տեղակալներին

Նոյեմբերի 28-ին ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը ոստիկանության կենտրոնական վարչակազմի, գլխավոր ու մարզային վարչությունների եւ տարածքային ստորաբաժանումների ղեկավար կազմին ներկայացրեց ոստիկանության պետի նորանշանակ տեղակալներ Տիգրան Եսայանին եւ Արթուր Մարտիրոսյանին:




Արման Սարգսյանն անդրադարձավ նրանց ծառայողական կենսագրությանը՝ ընդգծելով, որ և՛ Տիգրան Եսայանը, և՛ Արթուր Մարտիրոսյանը համակարգում դրական հետագիծ ու փորձ ունեցող պրոֆեսիոնալներ են, ծառայողական կենսագրությունը սկսել են շարքայինից եւ իրենց ջանասիրությամբ ու մասնագիտական գիտելիքների կատարելագործմամբ հետագայում զբաղեցրել պատասխանատու պաշտոններ:

Տիգրան Եսայանը զբաղեցնում էր ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալի պաշտոնը, իսկ Արթուր Մարտիրոսյանը ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարն էր, մինչ այդ՝ գլխավոր վարչության պետի առաջին տեղակալը:

Արման Սարգսյանը, շնորհավորելով նորանշանակ տեղակալներին, հույս հայտնեց, որ նրանց պաշտոնավարումը կլինի բեղմնավոր, իսկ արդյունքը՝ տեսանելի ոչ միայն համակարգում, այլեւ հասարակության մեջ:

Ավարտին ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարը հանձնարարեց ակտիվացնել հանցավորության դեմ պայքարը բոլոր ուղղություններով՝ հատուկ շեշտելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտը:

## Ղրղզստանի ՆԳՆ պատվիրակությունը ՀՀ ոստիկանությունում






Նոյեմբերի 25-ին ոստիկանության շտաբի պետ Արմեն Ղուկասյանն ընդունեց աշխատանքային այցով Հայաստանում գտնվող Ղրղզստանի ՆԳՆ լրատվական ծառայության պատվիրակությանը՝ ծառայության ղեկավար Բակիտ Սեիտովի գլխավորությամբ: Ողջունելով հյուրերին՝ նա կարեւորեց երկու պետությունների իրավապահների երկկողմ համագործակցությունը, ինչպես եւ փոխգործակցությունը ԱՊՀ եւ ՀԱՊԿ շրջանակներում: Նա ներկայացրեց ոստիկանությունում ընթացող բարեփոխումները՝ հատուկ անդրադառնալով նոր ստեղծվելիք պարեկային շարժական ծառայությանը, օպերատիվ կառավարման կենտրոնի արդիականացմանը, ճանապարհային ոստիկանությանը վերաբերող օրենսդրական փոփոխություններին եւ այլ ծրագրերի:

Բակիտ Սեիտովն իր հերթին կարեւորեց հանցավորության դեմ պայքարում երկու պետությունների իրավապահների համագործակցությունը:

Նույն օրը պատվիրակությանն ընդունեց ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը: Ողջունելով հյուրերին՝ նա ներկայացրեց ստորաբաժանման գործառույթները: Խոսվեց զանգվածային լրատվության միջոցների եւ հասարակության հետ կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների մասին:

Ղրղզ գործընկերները, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, ներկայացրին իրենց երկրում ոլորտին առնչվող առանձնահատկությունները: Քննարկվեցին նաեւ սոցցանցերում երկու երկրների իրավապահ կառույցների ներգրավվածության, թափանցիկ աշխատանքի եւ լրատվությանը վերաբերող այլ հարցեր:

Հանդիպման ավարտին հյուրերը շրջեցին հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունում. եղան աշխատասենյակներում, հեռուստատեսային տաղավարում, ծանոթացան ստորաբաժանման աշխատանքին:

էջ 2

## Միշտ օրենքի ու ժողովրդի պահապան



2001 թ. նոյեմբերի 30-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ոստիկանության մասին» օրենքը. այդ օրը նշվում է Արցախի ոստիկանության օր:

Նորանկախ պետության կարեւոր հիմնասյուներից էր ի սկզբանե եւ այդպիսին է այսօր ու միշտ՝ երկրի ներքին անվտանգության, կայունության, հասարակական կարգի պահպանման երաշխավոր:

Ոստիկանությունը բոլոր ժամանակներում է պատասխանատու երկրի ներքին անվտանգության համար, պատասխանատու է հանրության անդորրի, քաղաքացու ապահովության համար: Իսկ նորանկախ Արցախի Հանրապետության ոստիկանության համար այս առաքելությունը զուգորդվեց պետականաշինության գործընթացի հետ: Ու ոստիկանությունը այնտեղ էր, որտեղ հայրենիքն ու ժողովուրդը ունեին իր կարիքը:

Այսօր վստահաբար կարող ենք ամրագրել՝ Արցախի Հանրապետության ոստիկանությունը, որպես պետության կարեւոր հիմնասյուներից մեկը, միշտ համաքայլ է ժամանակի պահանջներին, մշտական կատարելագործման ընթացքի մեջ է եւ ամենակարեւորը՝ միշտ ժողովրդի կողքին, միշտ օրենքի ու օրինականության պահապան: Սա Արցախի ոստիկանության մասնագիտական ու մարդկային խնդիրն է, պատվի խնդիրը:

Տես նաեւ՝ էջ 5

## Ավազակային հարձակումը բացահայտվեց



Նոյեմբերի լույս 19-ի գիշերը ոստիկանության Ապարանի բաժնում ավազակության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Երեք հոգի մահակներով մտել էին Արագած գյուղի տներից մեկը, կապկպել 64-ամյա տանտիրուհուն, պահանջել ու վերցրել փող, ոսկեղեն, բանկային քարտեր եւ փախել:

Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց: Ապարանի քրեական հետախույզներն անցան օպերատիվ միջոցառումների իրականացմանը՝ համագործակցելով ԿՀԴՊ գլխավոր վարչության, Արագածոտնի մարզային վարչության, Աշտարակի եւ Մաշտոցի բաժինների գործընկերների հետ: Ծավալուն միջոցառումների արդյունքում պարզվեցին դեպքի հանգամանքները, հանցագործությունը կատարած անձանց ինքնության վերաբերյալ տեղեկություններ ստացվեցին: Արդյունքում՝ քրեական հետախույզները հայտնաբերեցին կասկածվողներին:

Երեւանի Նորաշեն թաղամասից ոստիկանության Աշտարակի բաժին բերման ենթարկվեց մայրաքաղաքի բնակիչ, 39-ամյա մի տղամարդ: Աշտարակում հայտնաբերվեց Աշտարակի բնակիչ, 30-ամյա մի տղամարդ: Արագած գյուղում էլ, որտեղ տեղի էր ունեցել դեպքը, հայտնաբերվեց երրորդ անդամը: Արագածում ապրող 37-ամյա տղամարդը եւս բերման ենթարկվեց ոստիկանության Աշտարակի բաժին:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են:

### Համակեցության բանաձեւ



*Երբ աշխատակիցները դուրս էին հանել սրահից, աղմուկաղաղակն ու հայհոյանքը շարունակել էր փողոցում:*

էջ 2

### Ապօրինի որդեգրման դեպքեր



*Տնօրենը սպառնացել էր, որ կզրկի նրան ծնողական իրավունքից եւ կկազմակերպի երեխայի որդեգրումը:*

էջ 3

### Խարդախությունն իբրեւ հանցատեսակ



*Նոթբուքը կամ հեռախոսը ստուգելու պատրվակով մտնում էր շենք ու մյուս մուտքով անհետանում:*

էջ 6

# Տարվա լավագույն հետաքննիչը

***Ոստիկանության հատուկ հանձնաժողովը 2018 թվականի լավագույն հետաքննիչ է ճանաչել ոստիկանության Վաղարշապատի բաժնի հետաքննության խմբի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Փայլակ Շմավոնյանին:***

Հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների, մասնավորապես՝ նյութերի նախապատրաստման ընթացքում առաջ քաշված վարկածները ստուգելու, ձեռք բերված տեղեկությունների եւ փաստերի էությունն ու փոխադարձ կապը քննելու գործում մեծ է հետաքննիչի դերը: Լինի մարմնական վնասվածք ստանալու, անձնական ունեցվածքի գողության թե յուրացման դեպք՝ հաղորդումը ստանալուն պես օպերատիվ խմբի հետ, որպես խմբի ավագ, դեպքի վայր է մեկնում հետաքննիչը: Նա զրուցում է տուժողի հետ, պարզում հանցագործության բնույթն ու դեպքի հանգամանքները:



Հետաքննության արդյունավետությունն էապես կախված է հետաքննության տեսուչի քրեագիտական գիտելիքներից ու փորձից: Մասնագիտական պատրաստվածությունը, հատկապես՝ տեղեկությունների հավաքման, իմաստավորման եւ ընտրության փուլում, օգնում է արագ եւ ճիշտ կողմնորոշվել, ինչը հանցագործության բացահայտման համար առանցքային նշանակություն ունի: Փայլակ Շմավոնյանը հենց այս բարդ ու պատասխանատու գործում է աչքի ընկել:

Փայլակ Շմավոնյանը ոստիկանությունում ծառայում է 2007 թվականից: Կարգապահ, բանիմաց ծառայող է, վայելում է անձնակազմի հարգանքն ու վստահությունը: 2018 թվականի ընթացքում բացահայտել է հանցագործության 5 դեպք, այդ թվում՝ անձնական ունեցվածքի գողության, մարմնական վնասվածք հասցնելու դեպքեր: Եվ այս ամենը հաշվի առնելով որոշվեց նրան ներկայացնել տարվա լավագույն հետաքննիչի պարգեւատրմանը»,- մեզ հետ զրուցում ասաց ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Դավիթ Պետրոսյանը:

Փայլակ Շմավոնյանին դրական էին նկարագրում նաեւ գործընկերները՝ «Ընկերասեր է, պատրաստակամ, որպես փորձառու հետաքննիչ՝ իր խորհուրդներով օգնում է սկսնակներին»:

Մինչ պարգեւատրմանն անդրադառնալը՝ Փայլակ Շմավոնյանին խնդրեցինք պատմել՝ երբ եւ ինչու ընտրեց ոստիկանի մասնագիտությունը:

«Դեռեւս դպրոցական տարիներից նախընտրել եմ իրավաբանի մասնագիտությունը: Ծնողներս նույնպես ցանկանում էին, որ իրավաբան դառնամ: 2007-2011թթ. սովորել եմ ոստիկանության ակադեմիայում, այնուհետեւ աշխատանքի եմ անցել Վաղարշապատի բաժնում՝ որպես օպերլիազոր: 2015 թվականից մինչ օրս ծառայում եմ նույն բաժնի հետաքննության խմբում՝ արդեն որպես հետաքննության տեսուչ: Շատ հետաքրքիր է հետաքննության տեսուչի աշխատանքը: Եղել են դեպքեր, երբ հանցագործին բռնել ենք հենց դեպքի վայրում եւ բերման ենթարկել: Պատահել է՝ քաղաքացին դիմել է ոստիկանություն, հայտնել, որ իր մոտից փող են գողացել: Քննությամբ պարզվել է, որ գողությունը կատարել է նրա մտերիմը, ազգականը: Եվ ամենակարեւորը՝ քեզ բավարարված ես զգում, որ կարողանում ես օգտակար լինել քաղաքացիներին»,- ներկայացրեց Շմավոնյանն իր անցած ուղին ու ծառայության բնույթը:

Տարվա լավագույն հետաքննիչին երկար զբաղեցնել չէինք կարող, քաղաքացիները սպասում էին: Մեզ մնում էր աշխատանքային հաջող օր մաղթել՝ նոր ձեռքբերումներով:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Հիշատակի խոսք



Կյանքից անժամանակ հեռացավ ոստիկանության պաշտոնաթող գեներալ-մայոր Աշոտ Կարապետյանը:

Համակարգում էր 1993 թվականից:

Քրեական հետախուզության ավագ օպերլիազոր, բաժանմունքի պետ, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության բաժնի պետ, Արարատի մարզային վարչության պետի տեղակալ, Խորհրդայինի ՆԳ բաժնի պետ, Կենտրոնական բաժնի պետ, քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ, Երեւան քաղաքի վարչության պետ. ոստիկանությունում Աշոտ Կարապետյանի անցած ճանապարհի համառոտ նկարագիրն է:

Ծառայության ընթացքում արժանացել է չորս տասնյակից ավելի խրախուսանքների, այդ թվում՝ պետական պարգեւի:

Աշոտ Կարապետյանի հիշատակը վառ կմնա նրա գործընկերների սրտերում:

**ՀՀ ոստիկանություն**

# Ղրղզստանի ՆԳՆ պատվիրակությունը ՀՀ ոստիկանությունում

Սկիզբը՝ էջ 1



Հյուրերին ընդունեց նաեւ ոստիկանության հասարակական կարգի պահպանության վարչության պետ Գեորգի Այվազյանը: Կողմերը քննարկեցին հասարակական անվտանգության ու հասարակական կարգի պահպանության ուղղությամբ երկու երկրների իրավապահների ծառայությանը վերաբերող հարցեր: Ղրղզստանի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչները մանրամասնեցին իրենց երկրում ստեղծված պարեկային ծառայությանն առնչվող հարցեր՝ անդրադառնալով նաեւ Ղրղզստանի ներքին գործերի նախարարությունում ստեղծված զբոսաշրջային ոստիկանությանը: Հասարակական կարգի պահպանության վարչության պետն ու տեղակալները ներկայացրին հասարակական կարգի պահպանության ոլորտում իրականացվող բարեփոխումները:

Ղրղզստանի ներքին գործերի նախարարության լրատվական ծառայության պատվիրակությունը նույն օրն այցելեց նաեւ պարեկապահակետային ծառայության գունդ: Նրանք շրջեցին գնդում, հարգանքի տուրք մատուցեցին ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկանների հուշարձանին, ծանոթացան տեխնիկային եւ հանդիպում ունեցան գնդի հատուկ գումարտակի աշխատակիցների հետ: Ոստիկանները ներկայացրին իրենց ծառայության առանձնահատկությունները՝ պատասխանելով հյուրերին հետաքրքրող հարցերին:

Ղրղզստանի ներքին գործերի նախարարության բարձրաստիճան սպաներն այցելեցին նաեւ ոստիկանության Շենգավիթի բաժնի համայնքային ոստիկանության հենակետ ու ծանոթացան հենակետի գործունեությանն ու հատկապես բնակչության հետ տարվող աշխատանքներին:

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Համակեցության բանաձեւ

***Ոստիկանության օպերատիվ ամփոփագրերում խուլիգանությունը հաճախադեպ հանցատեսակ է: Նոյեմբեր ամիսը բացառություն չէր: Այս հրապարակմամբ կանդրադառնանք մի քանիսին: Բայց մինչ այդ՝ մի փոքրիկ դիտարկում. ինչ պատճառահետեւանքային կապ էլ փնտրես հանցավոր արարքի համար, ամենեւին չի արդարացնի այն: Ինչո՞ւ ենք այսքան չարացել, ինչո՞ւ է ատելությունը իշխող դարձել մարդկային հարաբերություններում, ինչո՞ւ չենք կարողանում լսել իրար: Պատասխանները շատ են, բացատրությունը՝ մեկը. ոչ ոք իրավունք չունի իրեն վեր դասել օրենքից, գերագնահատել իրեն ու դուրս գալ համակեցության շրջանակներից:***



Նոյեմբերի 3-ի գիշերը ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգած քաղաքացին, որ Տավուշի մարզի բնակիչ էր, հայտնում էր, որ հարեւանները կոտրում են իր տան պատուհանների ապակիները:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ նույն գյուղի բնակիչներ Սարգիս Շահվերդյանը, Արգամ Մխիթարյանը եւ Հակոբ Աղեկյանը ոչ սթափ վիճակում եկել են համագյուղացու տուն եւ կենցաղային ինչ-որ հարցի շուրջ վիճաբանելով՝ հայհոյել, ծեծել են նրան, ապա կոտրել պատուհանների ապակիները՝ խանգարելով նաեւ հարեւանությամբ ապրողների անդորրը:

Նոյեմբերի 10-ին Արարատի մարզի գյուղերից մեկի բնակիչն էլ կեսգիշերին զանգել է ոստիկանություն եւ հայտնել, որ չորս հարբած երիտասարդ եկել են հաշիվ պահանջելու, թե ինչու դստերը կնության չի տալիս իրենց ընկերոջը: «Համառ» հորը ծեծելուց ու մարմնական վնասվածք պատճառելուց բացի, կոտրել էին նրա մեքենայի դիմապակին: Իսկ երբ քնահարամ հարեւանները փորձել էին խոչընդոտել, բուռն հայհոյանքների էին արժանացել նաեւ իրենք:

Հասարակական կարգ խանգարելու սովորություն ունի նաեւ երեւանցի Գառնիկ Սահակյանը: Նա խուլիգանության համար նույնիսկ նախկինում քրեական պատասխանատվության է ենթարկվել: Նոյեմբերի 14-ի գիշերը սույն երիտասարդը «քաղաքական» մոտիվներով հանդես եկավ Սամիկոնյանց փողոցում: Կոնկրետ այդ փողոցի բնակիչներից մեկին էին հասցեագրված նրա հայհոյանքները, բայց դրանք լսելի էին նաեւ շենքի բնակիչներին: Ինչ խոսք, Գառնիկը ի պետս քաջության մի քանի բաժակ օղի էր խմել, իսկ հարբածությունն անցնելուց հետո ոստիկանությունում խնդրում էր մեղմ վերաբերվել:

Օղու շնորհիվ ահեղացած մեկ այլ երիտասարդի հարցերով էլ այս օրերին զբաղվում են Գյումրիի ոստիկանները: Նա նոյեմբերի 18-ի ուշ երեկոյան խուլիգանական արարքներ էր կատարել քաղաքի սրճարաններից մեկում: Հայհոյել էր, բաժակներ փշրել: Հասարակական վայրում աղմկելուց, վնասարարություն անելուց հետո էլ խփել էր իրեն դիտողություն արած աշխատակցին: Այնքան էր ոգեւորվել, որ չէր ենթարկվել նաեւ ահազանգով դեպքի վայր ժամանած ոստիկանության աշխատակիցներին:

Ժամանցի վայրում, ապա փողոցում ինքնադրսեւորվել էր նաեւ մայրաքաղաքի 28-ամյա բնակիչ Անդրանիկ Հովակիմյանը: Նա նոյեմբերի 17-ի գիշերը ռեստորանային համալիրներից մեկում անվայելուչ արարք դրսեւորելուց հետո սկսել էր վնասել համալիրի գույքը: Իսկ երբ աշխատակիցները նրան դուրս էին հանել սրահից, աղմուկ-աղաղակն ու հայհոյանքը շարունակել էր փողոցում:

«Նոյեմբերյան» խուլիգանական անցուդարձն այսքանով սահմանափակենք. մեկ-երկու դեպք ավելի կամ պակաս ներկայացնելը հարցի էությունը չի փոխում: Խնդիրը մնում է նույնը՝ անձնային ու հասարակական հարաբերություններում նահանջել է հանդուրժողականությունը:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Ապօրինի որդեգրման դեպքեր

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում օտարերկրյա որդեգրումների բնագավառում իրավախախտումների վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ էին ստացվել: Ձեռնարկված ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ բացահայտվեցին տարբեր պաշտոնատար անձանց կողմից մանկատների երեխաների որդեգրման գործընթացում կատարված հանցագործություններ ու օրենքի կոպիտ խախտումներ:

Պարզվել է, որ դեռեւս 2009 թ. որոշ պաշտոնատար անձինք ՀՀ-ում գործող մանկատներից մեկի երեխայի որդեգրումը կազմակերպելու նպատակով օգտագործել են այդ երեխայի ծնողի անունից գրված, նոտարական կարգով հաստատված գրավոր հայտարարություն` երեխայի խնամքից հրաժարվելու եւ որդեգրման համաձայնություն տալու մասին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում, սակայն տվյալ ծնողը բացատրությամբ հայտնել է, որ ինքը երբեւէ նման հայտարարություն չի արել եւ երեխայից հրաժարվելու որեւէ փաստաթուղթ չի ստորագրել: Պարզվել է, որ այդ փաստաթղթի օգտագործմամբ կազմակերպվել է տվյալ երեխայի որդեգրումը եւ տեղափոխումը արտերկիր:

Պարզվել է, որ Հայաստանի մանկատներից մեկի տնօրինությունը օգտագործել է մանկատանը գտնվող երեխայի ծնողի անունից դիմում` երեխայի խնամքից հրաժարվելու եւ որդեգրման համաձայնություն տալու մասին: Տնօրենը դիմումը օգտագործել է տվյալ երեխային որդեգրելու եւ արտերկիր տեղափոխելու նպատակով: Նյութերի նախապատրաստման ընթացքում երեխայի ծնողը հայտնել է, որ ինքը նման դիմում չի գրել: Ավելին` ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ այն օրը, երբ գրվել է այդ դիմումը եւ թվագրվել, տվյալ ծնողը ՀՀ-ում չի եղել:

Չունենալով որդեգրման գործընթացը կազմակերպելու կամ ուղղորդելու որեւէ լիազորություն` նախապես պայմանավորվելով ՀՀ-ում երեխա որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների հետ, մանկատների որոշ տնօրեններ եւ այլ պաշտոնատար անձինք կազմակերպել են նրանց հանդիպումը մանկատան երեխաների



հետ, այնուհետեւ համաձայնություն գալով կոնկրետ երեխայի որդեգրման հարցում` հորդորել են երեխայի ծնողին գրել որդեգրման համաձայնություն տալու դիմում:

Հարկ է նշել, որ ըստ ՀՀ օրենսդրության, որդեգրել ցանկացող որեւէ անձ իրավունք չունի որդեգրման նպատակով տեսակցել որեւէ երեխայի` մինչեւ ծնողի կողմից երեխայից հրաժարվելը եւ այդ երեխային որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառելը: ՀՀ օրենսդրության համաձայն` որդեգրել ցանկացող անձանցից առաջնահերթությունը տրվում է ՀՀ քաղաքացիներին, իսկ օտարերկրյա քաղաքացիները Հայաստանում որդեգրման ենթակա երեխայի մասին կարող են տեղեկություն ստանալ տվյալ երեխային Հայաստանում որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառելուց առնվազն երեք ամիս հետո, այն դեպքում, եթե Հայաստանի որեւէ քաղաքացի տվյալ երեխային որդեգրելու ցանկություն չհայտնի:

Ձեռնարկված միջոցառումների ընթացքում տեղեկություններ են ստացվել, որ Հայաստանի մանկատների տարբեր ժամանակահատվածներում պաշտոնավարած տնօրեններ կատարել են օրենքի բազմաթիվ խախտումներ` հնարավոր դարձնելով մանկատան երեխայի որդեգրումը: Մասնավորապես, տեղեկություն է ստացվել, որ մանկատան տնօրենը տեւական ժամանակ հորդորել է մանկատան սաներից մեկի ծնողին` հրաժարվել երեխայից, դիմում գրել հրաժարվելու մասին եւ որդեգրման համաձայնություն տալ: Ծնողից չստանալով համաձայնություն` տնօրենը սպառնացել է, որ կզրկի նրան ծնողական իրավունքից եւ կկազմակերպի երեխայի որդեգրումը առանց նրա համաձայնության: Իսկ եթե իր կամքով գրի երեխայից հրաժարվելու մասին դիմում, ապա ինքը կհոգա, որ պարբերաբար կարողանա տեղեկություն ստանալ երեխայի մասին: Արդյունքում` ձեռք է բերվել երեխայի որդեգրման համաձայնության մասին ծնողի դիմումը, ինչից հետո կազմակերպվել է երեխայի որդեգրումը եւ տեղափոխումը արտերկիր:

Մեկ այլ դեպքում ձեռնարկված միջոցառումների արդյունքում, պարզվել է, որ մանկատան տնօրենը օգտվելով այն հանգամանքից, որ ծնողը սոցիալական ծանր պայմաններից ելնելով ցանկանում է ժամանակավորապես երեխային տեղավորել մանկատանը, ապակողմնորոշել է նրան` տրամադրելով սխալ տեղեկատվություն, որ նույնիսկ այդ դեպքում ծնողը պետք է տա գրավոր համաձայնություն` երեխայից հրաժարվելու եւ որդեգրման համաձայնություն տալու մասին, հակառակ դեպքում իրենք չեն կարող նույնիսկ ժամանակավոր ընդունել երեխային: Այդ կերպ ստանալով ծնողի համաձայնությունը` կազմակերպել է երեխայի որդեգրումը եւ տեղափոխումը արտերկիր:

Հարուցվել են քրեական գործեր:

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Հոդված 104. սպանություն



Քրեական օրենսգիրք. հոդված 104. սպանություն: Դասվում է կյանքի եւ առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքին, բնութագրվում է` ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելու դիտավորությամբ: Այլ կերպ ասած` ոտնահարվում է մարդու ապրելու իրավունքը:

Քրեական հետազոտությունները ցույց են տալիս, որ ամենադժվարը մարդասպանների տիպերի բացահայտումն է, քանի որ բազմազան են սպանության շարժառիթները, դրդապատճառները` խուլիգանական դրդումներ, շահ, վրեժ, խանդ, նախանձ, վախ եւ այլն:

Սպանություն չեն համարվում ինքնասպանության հասցնելը, օրենքի սահմաններում մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը, անզգուշությամբ մահ պատճառելը: Քրեական օրենսգրքում այդ տարանջատումները հստակ են:

Կան նաեւ այլ սահմանազատումներ: Օրինակ` սպանությունը կարող է կատարվել մեղմացուցիչ կամ ծանրացուցիչ հանգամանքներում:

Սպանությունը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ` անգործությամբ: Գործողությամբ սպանությունը կատարվում է մարդու նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան ներգործության միջոցով: Անգործությամբ կատարվում է, երբ անձն անհրաժեշտ գործողություններով չի կանխում վրա հասնող մահը, թեեւ տվյալ իրադրությունում պարտավոր էր:

Մասնագետների դիտարկմամբ` մարդասպաններին հատուկ են հուզական խանգարումները, հասարակությունից օտարվածության զգացումը, խաթարված հոգեվիճակը: Օրինակ` վարձու մարդասպանին վճարում են, եւ նա զոհին, ում չի ճանաչում, ում հանդեպ թշնամանք չունի, սառնասրտորեն սպանում է:

Կան մարդասպաններ, որոնք գործում են հանգամանքների բերումով. էմոցիոնալ են, իմպուլսիվ, չեն կարողանում զսպել ագրեսիվությունը եւ դիմում են այդ քայլին:

Լինում են դեպքեր, երբ հանցագործն իր արարքն ընկալում է որպես պատվի հարց: Հարավարեւմտյան թաղամասում 48-ամյա տղամարդը սպանել էր կնոջ սիրեկանին ու չէր զղջում` պատվի հարց էր լուծել:

Արձանագրվել են նաեւ դեպքեր, երբ սպանությունը կատարվել է չնչին առիթով, իսկ հետագայում քննությամբ պարզվել է, որ պատճառը տարիներ շարունակ կուտակված անհանդուրժողականությունն է: Մայրաքաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում ավագ եղբայրը սպանել էր կրտսերին: Անհեթեթ առիթով վիճել էին, որն ավարտվել էր սպանությամբ: Պարզվեց` այդ ընտանիքում անբարյացակամությունը մշտապես էր եղել, իսկ հանգուցալուծումը ողբերգական եղավ:

Սպանությունն իբրեւ հանցատեսակ` ամենածանրերից է: Առաջին մարդասպանից` Կայենից հետո, ցավոք, մարդ արարածը սպանել ու սպանում է: Ու, Բանաստեղծի խոսքով ասած` դեռ հեռու է մինչեւ Մարդը մեր ճամփան:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Գրպանահատները բերման ենթարկվեցին

Ոստիկանության Արաբկիրի բաժնում գրպանահատության վերաբերյալ երկու հաղորդում էր ստացվել: Ժամը 12-ի սահմաններում թիվ 47 երթուղու ավտոբուսում մի կնոջ պայուսակից գողացել էին դրամապանակը, որի մեջ եղել էր փող:



Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկեցին: Նրանց միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի ծառայողները. համատեղ աշխատանքի շնորհիվ գրպանահատը հայտնաբերվեց: Ֆրանսիայի հրապարակից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկվեց Սամիկոնյանց փողոցի 27-ամյա մի բնակիչ: Նա խոստովանեց կատարածը: Հայտնաբերվեց նաեւ գողոնը:

Ոստիկանները նյութեր էին նախապատրաստում, երբ նոր հաղորդում ստացվեց: Ժամը 17-ի սահմաններում երթուղային ավտոբուսում ուղեւորուհու պայուսակից դրամապանակ էին հափշտակել, որի մեջ կար փող, զեղչի ու այցեքարտեր:

Հաղորդումից րոպեներ անց ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողների պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ Բաղրամյան պողոտայից բերման ենթարկվեց Անդրանիկի փողոցի 24-ամյա մի բնակիչ:

Երկու դեպքով էլ նախապատրաստվում են նյութեր:

Նոյեմբերի 17-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում մի կնոջից հաղորդում էր ստացվել, որ թիվ 47 երթուղու ավտոբուսում պայուսակից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել էր փող:

Արաբկիրի բաժնի ծառայողների եւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի աշխատակիցների համատեղ աշխատանքի արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ նշված գողությունը հնարավոր է կատարած լինի Կապան քաղաքի 21-ամյա մի բնակիչ: Նա Ֆրանսիայի հրապարակից բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Հեռախոսները հայտնաբերվեցին



Նոյեմբերի 16-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի աշխատակիցների պրոֆեսիոնալ գործողությունների արդյունքում անձնական ունեցվածքի գողության երկու դեպք բացահայտվեց:

Առաջին դեպքը ոստիկանության Կենտրոնական բաժնում գրանցվել էր նոյեմբերի 15-ին: Կեսգիշերին մոտ մի կին հաղորդում էր տվել, որ երեկոյան Հյուսիսային պողոտայում գողացել են դուստեր բջջային հեռախոսը:

Մյուս դեպքը նոյեմբերի 16-ին էր եղել: Ագաթանգեղոսի փողոցում մի կնոջ պայուսակից դարձյալ գողացել էին բջջային հեռախոսը:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները համապատասխան միջոցառումներ ձեռնարկեցին: Նրանց միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները, եւ հենց մասնագիտացված ստորաբաժանման հմուտ գործողությունների շնորհիվ գրպանահատը հայտնաբերվեց:

Քրեական հետախույզները Ֆրանսիայի հրապարակից ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթարկեցին Դրոյի փողոցի 43-ամյա մի բնակչի:

Նա տվել է խոստովանական բացատրություն, որ երկու գողությունն էլ ինքն է արել:

Բջջային հեռախոսները հայտնաբերվել են:

Նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



# Նավուճյան գինը

Վանաձորցի Համլետ Աբրահամյանը ամիսներ առաջ պատրաստվում էր մեկնել Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի, մինչդեռ ֆինանսական խնդիրներ ուներ լուծելու: Անտուն էր, գիշերում էր ուր պատահեր: Ոգելիցի նկատմամբ էլ անտարբեր չէր: Սթափ մի օր որոշեց լուծել ժամանակավոր կացարանի հարցը: Իմանալով, որ ծանոթ Նորայրը տնակներ ունի՝ խնդրանքով դիմեց նրան: Նորայրն ընդառաջեց եւ բանալին նրան տվեց: Համլետն անչափ շնորհակալ էր, որ ծանոթը ձեռք մեկնեց:

Թեպետ կարճաժամկետ էր բնակվելու, սակայն Համլետը տնակը լքելու մտադրություն չուներ: Խոստումը մոռացած՝ առօք-փառօք ապրում էր: Մի օր էլ Նորայրը որոշեց այցելել Համլետին՝ իմանալու, թե երբ է պատրաստվում ազատել տնակը:

Կնոջ՝ Անահիտի հետ էր: Համլետը, ինչպես միշտ, հարբած էր եւ տնակատերերին դիմավորեց անբարյացակամ, քանզի տնակը լքելու հարցը նրա սրտով չէր: Վիճեցին. Համլետը սպառնաց՝ թե կսպանի Նորայրին: Նա էլ սպառնալիքներից վախեցած՝ դուրս ելավ տնակից: Նրան հետեւեց Համլետը: Դրսում սպասող Անահիտը տեսնելով իրարանցումը՝ փորձեց հանգստացնել Համլետին: Հանդարտվելու մտադրություն չունենալով՝ Համլետը պատառաքաղով վնասվածք պատճառեց Անահիտին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին: Սակայն կատարվածից Նորայրը տեղը չէր գտնում: Եղելությունը պատմեց ծանոթ Վարդանին, ու երկուսով գնացին Համլետից պարզաբանում պահանջելու: Վիճեցին, որի ընթացքում Համլետը ստացավ միջին ծանրության վնաս՝ առողջության տեւական քայքայումով:

Համլետ Աբրահամյանը խախտել էր քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի եւ 137-րդ հոդվածի պահանջները, իսկ Նորայր Վարդանյանը կատարել էր արարք՝ 113-րդ հոդվածի 1-ին մասով:

Դիմողների բողոքների բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

# Ի՞նչ է քրեական լրատվությունը

Քրեական լրագրության թեմա են դառնում արտակարգ պատահարները, դեպքերը, անօրինական գործողությունները, կոռուպցիոն դեպքերը, բռնությունները, մի խոսքով՝ քրեական օրենսգրքի հոդվածների հատկանիշներով կատարվող արարքները:

Անկախ հանգամանքներից, թե պետք է լինել անաչառ. վիճահարույց հարցերը լուսաբանելիս պետք է հաշվի առնել երկու կողմի կարծիքը: Լրագրողի արհեստավարժությունը անկողմնակալ լինելն է: Պատկերացնո՞ւմ եք՝ լրատվամիջոցը ներկայացնում է մի հոդված, որտեղ կողմերից մեկը մյուսին մեղադրում է ծանր հանցագործության մեջ, եւ հոդվածում արտացոլված է միայն մեղադրող կողմի կարծիքը: Դա լրագրություն չէ եւ ոչ էլ լրագրողն է արհեստավարժ: Այդ երկու պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է նաեւ մեղադրվող կողմի տեսակետը, կարծիքը: Լրագրողը պարտավոր է հոգալ, որ մեղադրանքը եւ դրա հակադարձումն իրենց տեղն ունենան նույն հոդվածում: Կարող է առանձին-առանձին ներկայացնել երկու տեսակետն էլ, ապա կատարել սեփական վերլուծություն՝ առանց կողմնակալության: Նման դեպքերում եզրակացությունն ընթերցողինն է:

Ճիշտ մատուցված քրեական լրատվությունը նաեւ բարոյական դաստիարակություն է լսարանի համար: Շատ իրավապահ կառույցներ օգտագործում են ԶԼՄ-ները որպես ինֆորմացիոն դաշտ, հանցագործի կամ հանցագործության մասին ինֆորմացիա ստանալու գործիք: Քրեական լրագրությունը պետք է օգնողի դերում լինի եւ ոչ խանգարողի: Սա քրեական լրատվության հիմնական խնդիրներից է:

Քրեական լրատվության կարեւոր սկզբունքներից մեկն այն է, որ դեպքերը ներկայացնելիս լրագրողը չպետք է «վնասի» ո՛չ տուժողին, ո՛չ մեղադրյալին, ո՛չ նախաքննությանը, այլ կատարի իրեն վերապահված գործողությունները: Երբեք մեղադրողի դերում հանդես չգալ, մերկապարանոց հայտարարություններ չանել: Փաստեր չունեք՝ ուրեմն նախընտրելի է լռելը, անգամ եթե տվյալ անձն ունի կաշառակերի, կոռումպացվածի համբավ: Հաճախ լրագրողները մոռանում են, որ քրեական գործի նյութերը նախապատրաստում են համապատասխան մարմինները, քրեական գործը հարուցում է քննիչը, գործով վճիռը կայացնում է դատարանը: Այս երեք գործառույթները նրանք վերցնում են իրենց վրա եւ անձի, դեպքի վերաբերյալ ձեւավորում հասարակական կարծիք:




Ինչպես լրագրության ցանկացած ճյուղի, այնպես էլ քրեական լրատվության համար տեղին է ասել, որ յուրաքանչյուր հնչյուն, բառ, միտք ընտրելիս կամ օգտագործելիս պետք է մտածել՝ ճի՞շտ է, տեղի՞ն է ընտրված, թե՞ ոչ:

Պատահում են դեպքեր, երբ տուժողներն անչափահաս են: Սա, թերեւս, ամենացավոտ հարցերից է: Մանկապղծության, բռնաբարության մեղադրանքով հարուցված քրեական գործերով հոդվածներում ընդհանրապես պետք է խուսափել անուններ, բնակավայրեր նշելուց: Չպետք է մոռանալ, որ նման տեղեկատվության հետեւում դեռեւս չձեւավորված մարդն է, վաղվա քաղաքացին, որի անվտանգության ապահովումը ոչ միայն պատկան մարմինների, այլեւ հասարակության խնդիրն է, որի մի մասնիկն էլ լրագրողն է: Չի կարելի վարկանիշ ապահովելու համար ճակատագրեր ոտնահարել:

Կարելի է առանձնացնել մի քանի հիմնական ժանր, որոնք հաճախ են օգտագործում լրագրողները՝ միջոցառումները, դեպքերը, իրավիճակները լուսաբանելիս: Փորձենք առանձին-առանձին քննարկել դրանք:

Ինֆորմացիոն տեղեկատվություն ժանրը կազմված է երկու-երեք նախադասությունից եւ չունի ինքնուրույն վերնագիր: Ժամանակագրությունը տեղեկատվություն է դեպքերի եւ իրադարձությունների մասին՝ առանց մանրամասների:

Քրեական լրագրությունը առանձնահատուկ ժանր է՝ հիմնված լրագրողի դատողությունների կամ ենթադրությունների վրա՝ արդեն իսկ կատարված դեպքի ու երեւույթների վերաբերյալ:

Քրեական լրագրության ժանր է, որի հետաքննության համար հիմք է հանդիսացել կատարված հանցագործությունը, քաղաքական սկանդալը, խարդախությունը: Այս ժանրի շրջանակներում աշխատող լրագրողի նպատակն է լսարանի, հանրային հետաքրքրության համար ապահովել ճիշտ եւ փաստված լրատվություն: Լրագրողական հետաքննության հիմքում պետք է լինի անվիճելի, փաստացի տեղեկատվություն, որը ներկայացրել է այն անձը, որն իրավունք ունի գործի շրջանակներում նման տեղեկատվություն հայտնելու: Ընդհանուր առմամբ՝ լրագրողական հետաքննության նպատակն է հանրային դարձնել այն տեղեկատվությունը, որը հասարակության համար շատ կարեւոր է, բայց նրանից թաքցնում են, քանի որ այդ նույն հասարակությունը կարող է պայքարել անօրինականությունների դեմ՝ իր բարեկեցության համար:

Քրեական լրագրության ժանրը բացատրում, քննարկում է առավել կարեւոր իրադարձությունները: Հեղինակային դիրքորոշումը արտահայտվում է դեպքերի վերաբերյալ կարծիք հայտնելով, ձեռքբերումների եւ բացթողումների վերլուծությամբ, կատարվելիք, սպասվող գործողություններին գնահատական տալու, կանխատեսումներ անելու, ներկայացնելու ընթացքում:

***Շարունակելի***

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

# Շվարձալի ամփոփագիր

### Լեռների օրենքով

Ոստիկանությունում 38-ամյա տղամարդը հաղորդում է տվել, որ օրեր առաջ կնոջ եղբայրները ծեծել են իրեն: Իսկ հարցին, թե ինչու ժամանակին չի դիմել, պատասխանել է, որ չի ցանկացել: Ենթադրվող հաջորդ հարցը՝ իսկ հիմա ինչու է ցանկացել՝ դեռ կպարզվի:



Ձեռնարկվում են միջոցառումներ՝ կնոջ եղբայրներին հայտնաբերելու ուղղությամբ:

### Տնաքանդ որդին

59-ամյա մի կին ոստիկանությունում հաղորդում է տվել, որ ցերեկը, օգտվելով իր տնից բացակայելու հանգամանքից, 41-ամյա որդին կոտրել է տան պատուհանները, դուռը, սանդուղքները, քանդել ներսի պատերը՝ պատճառելով նյութական վնաս:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ որդուն հայտնաբերելու եւ արարքի նպատակը պարզելու ուղղությամբ:

### Եղբայրաբար

Ոստիկանություն զանգած 28-ամյա երիտասարդը հայտնում էր, որ ցերեկը, երբ ինքն աշխատանքի է եղել, 33-ամյա եղբայրն իրենց բնակարանից գողացել է իր ոսկյա զարդը:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ եղբորն ու գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

### Կապտուկը նկատելուց հետո

Ոստիկանությունում հաղորդում է տվել 77-ամյա Յուղաբեր տատը: Նա հայտնել է, որ երկու օր առաջ վիճաբանության ժամանակ հարսը ոլորել է մատները՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Հաղորդումն ընդունելիս բնական հարց է ծագել, թե ինչու է երկու օր հետո դիմում: Պատասխանը համոզիչ էր՝ մատների կապտուկը տեսել էր այդ օրը:

### Տասներկուհազարանոց կուտ

Ոստիկանությունում հաղորդում է տվել Արագածոտնի մարզի բնակիչ, 17-ամյա մի պատանի: Ըստ նրա՝ ամռանը մասնակցել է սոցիալական ցանցի մի օգտատիրոջ կազմակերպած մրցույթին, որի հաղթողները պետք է շահեին թանկարժեք բջջային հեռախոս: Օրեր անց հիշյալ էջի օգտատերը հայտնել է իրեն, թե հաղթել է մրցույթում եւ շահած այֆոնն ուղարկելու իրենից պահանջել եւ ստացել է 12 հազար դրամ:

Մի ներքին համոզմունք կա, որ այդ մրցույթի բոլոր մասնակիցներն էլ «շահել են», իսկ նրանցից շատերն էլ «կուտը կերել» եւ ուղարկել են իրենց բաժին 12 հազարը:

Հանգամանքները պարզվում են:

### Փեսա ընդ կո

Իր հայրենի քաղաքի ոստիկանության բաժնում հաղորդում է տվել 42-ամյա մի տղամարդ, որ օրեր առաջ գտնվել է մեկ այլ քաղաքում, որտեղ 26-ամյա փեսան ու նրա երեք ընկերներն իրեն տեղափոխել են մոտակա դաշտ, ծեծել եւ ստիպել են գրել լիազորագիր՝ իր «ՎԱԶ-2106» մեքենան դստերը նվիրաբերելու վերաբերյալ: Նա հավելել է, որ իրենից խլել են մեքենայի բանալիները, տեխնիկական անձնագիրն ու վեց հազար դրամ:

Բնական հարց է ծագել, թե ինչու նա ժամանակին չի դիմել ոստիկանություն: Պատասխանել է, թե նպատակահարմար չի գտել դիմել ոստիկանության այլ բաժին, հետեւաբար, հենց վերադարձել է հայրենի քաղաք՝ անմիջապես դիմել է «հարազատ» բաժին:

Տուժածի աղջիկը դեռ իր խոսքը չի ասել:

# www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 21-ից 28-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 30 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, ծեծի եւ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ գողության, 3-ը՝ խարդախության, 1-ը՝ առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու եւ ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ կանխամտածված սնանկության, 1-ը՝ կաշառք տալու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ արդարադատության իրականացմանը եւ քննությանը խոչընդոտելու, 1-ը՝ պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրանք կատարելու սպառնալիքի համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 89 ճանապարհատրանսպորտային պատահար. 8 մարդ զոհվել է, 118-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 17 դեպք. 18 մարդ ստացել է մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Հանրապետության ճանապարհներին

Նոյեմբերի 24-ին Երեւանի Խանջյան փողոցում իրար են բախվել «Պորշ» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 25-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 24-ին Երեւանի Բագրատունյաց փողոցում իրար են բախվել «Կիա» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Նոյեմբերի 24-ին Երեւանի Դավիթ Բեկի փողոցում «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված երկու «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաների. «ՎԱԶ-2121»-ի 67-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 25-ին Երեւանի Հալաբյան եւ Արզումանյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Միցուբիշի», «Տոյոտա» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի 16-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 25-ին Երեւանի Բաշինջաղյան փողոցում անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 55-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 25-ին Հրազդան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցում իրար են բախվել «Ինֆինիտի» եւ «ԳԱԶ-31» մակնիշի ավտոմեքենաներ. «ԳԱԶ-31»-ի 22-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 25-ին Օձուն-Հագվի ճանապարհի 2-րդ կմ-ին «Մերսեդես Բենց ՄL» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից եւ 100 մետր գլորվել ձորը. 27-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց, իսկ վթարված ավտոմեքենայի մոտ հայտնաբերվել են 3 դիակներ եւ 47-ամյա վարորդի վարորդական իրավունքի վկայականը:

■

Նոյեմբերի 25-ին Երեւան-Իջեւան ճանապարհի 124-րդ կմ-ին իրար են բախվել «Նիսան» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ «Մերսեդես»-ի 45-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ ուղեւորը մահացել է:

■

Նոյեմբերի 26-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 31.5-րդ կմ-ին իրար են բախվել «ՎԱԶ-2107» եւ «Համեռ» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2107»-ի 28-ամյա վարորդը եւ 31-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Նոյեմբերի 26-ին Քարաբերդ-Չիթհանքով ճանապարհի 4-րդ կմ-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից եւ գլորվել ձորը. 45-ամյա վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց. 45-ամյա ուղեւորը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

■

Նոյեմբերի 26-ին Երեւանի Շիրակի փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 82-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 26-ին Երեւանի Բաբաջանյան եւ Անդրանիկի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Մերսեդես», «Հյունդաի» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2107»-ի 74-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 26-ին Մարգարա-Վանաձոր-Տաշիր Մ-3 ճանապարհի 81-րդ կմ-ին «Ռենո» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. 60-ամյա վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

# Արցախի ոստիկանության կայացումը

1923 թ. հուլիսի 7-ին կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ):

Ներքին գործերի կառույցը ստեղծվեց 1923 թ. օգոստոսի 4-ին եւ կոչվում էր ԼՂԻՄ-ի ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ, 1926 թ.՝ ՆԳ վարչություն:

Կոմիսարիատը բաղկացած էր հետեւյալ բաժիններից՝ վարչական, կոմունալ-տնտեսական, միլիցիայի:



Մինչեւ Արցախյան ազատագրական շարժումը, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը Ադրբեջանի խորհրդային իշխանությունների կողմից ենթարկվում էր տարբեր սահմանափակումների եւ բռնաճնշումների: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը այնպիսի սոցիալ-տնտեսական քաղաքականություն էր վարում, որ ԼՂԻՄ-ը կախվածության մեջ լիներ Բաքվից եւ հարակից ադրբեջանական բնակավայրերից: Բավական է նշել, որ Ստեփանակերտից մարզի չորս շրջկենտրոններ տանող ճանապարհները պարտադիր անցնում էին ոչ մարզի տարածքով՝ դրանով իսկ վերահսկելի դարձնելով հայերի յուրաքանչյուր տեղաշարժ:

1988 թ. փետրվարի 20-ին մարզային խորհրդի պատգամավորների 20-րդ նստաշրջանը որոշում կայացրեց՝ մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու եւ Հայաստանի կազմում ընդգրկելու վերաբերյալ:

Փետրվարի 20-ի պատմական որոշումը շարժեց ադրբեջանցիների զայրույթը: Դա սկզբում արտահայտվեց հայերին պատժելու, սպանելու, ԼՂԻՄ-ը վերացնելու կոչերով: Ադրբեջանի ՆԳ փոխնախարարը հայտարարում էր, որ հարյուր հազար ադրբեջանցիներ պատրաստ են հայերի ջարդ կազմակերպել Ղարաբաղում:

1988 թ. փետրվարի 22-ին Աղդամի բազմահազարանոց ամբոխը ադրբեջանցի միլիցիոներների ուղեկցությամբ շարժվեց դեպի Ասկերան քաղաք: Իմանալով այդ մասին՝ Ստեփանակերտից եւ Ասկերանի շրջանից մեծ թվով մարդիկ հավաքվեցին քաղաքի արվարձանում, որպեսզի կանխեն ադրբեջանցիների մուտքը հայկական բնակավայրեր: Ադրբեջանական ամբոխի առաջին շարքերում կանգնած էին ադրբեջանցի միլիցիոներները, որոնք ձեւացնում էին՝ իբր ձգտում էին կանխել ամբոխի անկանխատեսելի գործողությունները: Հնչեցին առաջին կրակոցները: Հակառակորդը հանդիպեց ոչ միայն դիմադրության, այլեւ զգաց համախմբված հայի ուժը: Ասկերանի հակամարտության ընթացքում սպանված երկու ադրբեջանցիների գործով կատարված նախաքննությունը Արցախի հայությանը վերջնականապես վստահեցրեց, որ խորհրդային գաղափարախոսությամբ դաստիարակված իբր «ապազգային» միլիցիոներները կանգնած էին ժողովրդի կողքին, պատրաստ իրենց կյանքի գնով անգամ նպատակադրված պայքարել անկախության վեհ գաղափարի իրագործման համար:

Ձախողվելով Ասկերանում, չհասնելով դրված նպատակի իրագործմանը՝ Ադրբեջանի ղեկավարությունը մի քանի օր անց կազմակերպեց եւ իրագործեց Սումգայիթի ոճրագործությունը: Ադրբեջանի իշխանությունները դիմում են կտրուկ քայլի՝ հավաքում են մարզի ՆԳ մարմինների հաշվեցուցակային զենքն ու զինամթերքը՝ փոխադրելով Շուշիի ՆԳ բաժին: Միաժամանակ կտրուկ կրճատվում է մարզի ՆԳ բաժինների հայ աշխատակիցների թիվը: Փոխարենը՝ լրացուցիչ հաստիքներ հատկացվեցին Շուշիի շրջանին ու լրացուցիչ տասը բաժանմունք ստեղծվեց ադրբեջանաբնակ գյուղերում՝ հիմնականում հայկական գյուղերի սահմաններին:

Բաքվի իշխանությունները, ականատես լինելով Արցախի միլիցիայի ստանձնած կարեւոր դերին Արցախյան շարժման գործում, նպատակ դրեցին չեզոքացնել այդ գործոնի հնարավորություններն ու ազդեցությունը՝ կաշառքի, համոզելու կամ վախեցնելու միջոցով: Այդ նպատակով 1988 թ. մարտին օպերատիվ խորհրդակցության անվան տակ Բաքու կանչվեցին ԼՂԻՄ-ի ՆԳ վարչության պետ Ռոբերտ Թումանյանը եւ ՆԳ հինգ բաժինների պետերը: Բաքու մեկնեց միայն Ռ. Թումանյանը, որը, հիասթափված Ադրբեջանի ՆԳ նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների վարքագծից, Ստեփանակերտ վերադարձավ եւ ճիշտ համարեց գործընկերների Բաքու չգնալը: Վերադասի հրամանին չենթարկվելն արտառոց երեւույթ էր, ուստի ծառայողական քննություն կատարելու նպատակով ԽՍՀՄ ՆԳՆ-ից Ստեփանակերտ ժամանեցին մի խումբ բարձրաստիճան սպաներ: Հանձնաժողովը տեղում մանրամասն ծանոթանալով իրադրությանը՝ բավարարվեց միայն խիստ նկատողություն հայտարարելու որոշմամբ: Դրան հաջորդեցին կադրային փոփոխությունները. ԼՂԻՄ-ի ուժային կառույցների հայ ղեկավարները փոխարինվեցին Մոսկվայից նշանակված պաշտոնյաներով:

Ադրբեջանի ՆԳ մարմինների հայ աշխատակիցների ճիշտ վարքագծի արդյունքում հնարավոր եղավ հասնել լուրջ հաջողությունների, այլապես զոհերը կլինեին անհամեմատ շատ, իսկ հաջողությունները՝ քիչ:

ԽՍՀՄ ՆԳ նախարարությունից ԼՂԻՄ եկած բազմաթիվ բարձրաստիճան սպաներ, գիտակցելով հայ միլիցիայի ազդեցությունը հասարակական գործընթացների վրա, ձգտում էին ամեն կերպ համոզել նրանց, համագործակցության եզրեր գտնել Ադրբեջանի ՆԳ նախարարության աշխատակիցների հետ, որոնք «սահմանադրորեն» ԼՂԻՄ ՆԳ վարչության վերադասներն էին: Նրանց գործունեությունը «կարգավորվում» էր ոչ միայն ԽՍՀՄ, այլեւ ադրբեջանական ԽՍՀ օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, ցուցումներով, հրամաններով եւ այլն: ԼՂԻՄ-ի ՆԳ աշխատակիցը կրում էր եռակի ենթակայություն, որը ենթադրում է եռակի պահանջ, բնականաբար, եռակի ճնշում: Արցախի միլիցիան ոչ միայն դիմակայում էր այդ ճնշումներին, այլեւ պատրաստ էր դիմադրել ցանկացած ոտնձգության:

ԼՂԻՄ գործուղված ՆԳ նախարարության շատ գեներալներ դաստիարակված էին ստալինյան անձի պաշտամունքի գաղափարներով, իսկ ավելի երիտասարդներն անցել էին աֆղանական պատերազմի բովով: Նրանց ներշնչվել էր ԼՂԻՄ-ում թշնամու դեմ պայքարելու գաղափարը: Զինվորական ղեկավարները չէին փորձում անգամ հարաբերություններ հաստատել տեղի հայ բնակչության հետ: ԽՍՀՄ ղեկավարությունը բացահայտորեն պաշտպանում էր ադրբեջանական կողմին՝ նպատակ ունենալով Բաքվին հետ պահել դեպի Թուրքիա եւ արեւմուտք կողմնորոշվելուց: Մյուս նժարին Հայաստանն էր, որի աշխարհագրական դիրքը թույլ չէր տա դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Այնուհանդերձ, սկզբնական շրջանում Մոսկվայում կողմնակից էին սոցիալ-տնտեսական միջոցառումներով նպաստել իրավիճակի հանդարտեցմանը: Այդ նպատակով 1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ ղեկավար Միխայիլ Գորբաչովի հրամանով լուծարվեց ԼՂԻՄ-ի իշխանության գործադիր կոմիտեն, որի փոխարեն սկսեց գործել ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն՝ Արկադի Վոլսկու գլխավորությամբ: Կոմիտեի նպատակը Մոսկվայից ստացած ֆինանսական միջոցներով մարզում ներդրումներ կատարելն էր, բնակչությանը նյութապես շահագրգռելը: Գուցե տեւական ժամանակաշրջանում կարգավորման նման ձեւը իր արդյունքը տար, եթե չլիներ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թ. սեպտեմբերի 17-ի որոշումը, ըստ որի՝ հանրապետությունը իրավունք ուներ իր կազմում ստեղծել եւ վերացնել ինքնավար մարզեր:

Այս որոշումը շիկացրեց քաղաքական մթնոլորտը: Մարզում կտրուկ աճեցին հանցագործությունները: 1989 թ. 9 ամիսների ընթացքում արձանագրվեց 290 հանցագործություն, որոնցից բացահայտվեց 132-ը կամ 45,5%-ը, իսկ 120 ծանր հանցագործություններից բացահայտվեց 36-ը կամ 30%-ը: Ազգային հողի վրա կատարված 70 հանցագործություններից բացահայտվել էր 11-ը: Հանցագործությունների աճը կազմում էր 27%, կողոպուտը եւ ավազակային հարձակումներն աճել էին գրեթե երկու անգամ, դրանց մեջ տեսակարար մեծ կշիռ էր կազմում անձնական գույքի հրկիզումն ու ոչնչացումը: Հակամարտությունը խորանում էր: ԼՂԻՄ գործուղված ՆԳ բարձրաստիճան սպաները պարբերաբար վերադասին զեկուցում էին, որ հայերը խիստ կազմակերպված են, պատրաստ՝ իրագործելու անկախանալու որոշումը, եւ կենտրոնական իշխանություններին առաջարկում էին ավելի խիստ միջոցառումներ իրականացնել:

*Շարունակելի*

# Խարդախությունն իբրեւ հանցանք



Մարդուն երբ դրական են բնութագրում, նշում են՝ առաքինի է, ընկերասեր, ազնիվ, պարտաճանաչ: Բայց կա եւս մի բնութագրում. ճարպիկ տղա է՝ ասում եւ հիացած խոսում են մեկի մասին, որը ստում է, կեղծում, շողոքորթում: Այս արարքը, սակայն, քրեական օրենսգրքում բնութագրվում է մեկ բառով՝ խարդախություն:

Խարդախությունը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունքը ձեռք բերելը: Օբյեկտիվ կողմից խարդախությունը դրսեւորվում է նրանով, որ հանցավորը խաբեությամբ կամ վստահության չարաշահման եղանակով ներգործում է տուժողի կամքի եւ գիտակցության վրա, ինչի արդյունքում վերջինս ընկնելով մոլորության մեջ՝ իր կամքով գույքը հանձնում է հանցավորին: Խաբեությունն իրական փաստերի դիտավորյալ խեղաթյուրումն է կամ ճշմարտության մասին լռելը, ինչի հետեւանքով տուժողն ընկնում է մոլորության մեջ: Իսկ վստահության չարաշահումը հանցավորի եւ տուժողի միջեւ առկա վստահելի հարաբերությունների օգտագործումն է: Այդ հարաբերությունները կարող են բխել, օրինակ, լիազորագրից, պայմանագրից, հանցավորի նախկինում դրսեւորած վարքագծից, նրա անձից, հանցավորի եւ տուժողի միջեւ առկա ընկերական, ազգակցական եւ այլ բնույթի կապերից:

Սուբյեկտիվ կողմից խարդախությունը դրսեւորվում է միայն ուղղակի դիտավորությամբ եւ շահադիտական նպատակով: Խարդախության սուբյեկտիվ կողմի համար բնութագրական է այն, որ խարդախը, նախքան գույքը վերցնելը կամ դրան տիրանալը, ի սկզբանե պետք է դիտավորություն ունենա հափշտակել գույքը, այն չվերադարձնել, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունը:

Խարդախները հանցավոր ծրագրեր կազմելու հարցում անսպառ երեւակայություն ունեն, հաշվարկում են ամեն մանրուք, գիտեն օրենքի տառը եւ այն շրջանցելու համար հստակ պատկերացնում են՝ ինչպես է պետք գործել: Նորագույն տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ, ցավոք, կատարելագործվում են նաեւ այս հանցատեսակի իրագործման եղանակներն ու մեթոդները:

Այսօր շատերի համար ինչ-որ բան գնելու կամ վաճառելու ամենահարմար եղանակը դարձել է համացանցը, որտեղ կարելի է անվճար տեղադրել ցանկացած հայտարարություն կամ փնտրել այն ամենը, ինչ քեզ հետաքրքրում է: Սա գիտեն նաեւ խարդախները եւ համացանցի միջոցով ճարպկորեն չարաշահում են մարդկանց վստահությունը:

Մեջբերենք օպերատիվ ամփոփագրերից. ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից Մասիսի բաժնում հաղորդում է ստացվել մի քաղաքացուց, որը կայքում հայտարարություն է տարածել, թե ցանկանում է վարորդ աշխատել՝ իր մեքենայով: Ոմն Կարեն զանգել էր, բարձր աշխատավարձով աշխատանք առաջարկել: Ապագա գործատուի ցուցումով՝ քաղաքացին Մասիսում հանդիպել էր ոմն Ռուբոյի, ինչ-ինչ պայմանավորվածությունից ելնելով՝ նրան հանձնել իր «Մերսեդես»-ը, հետո Կարենին հանդիպելու նպատակով գնացել էր Արարատ, տեղ հասնելուն պես զանգել նրան: Բայց բաժանորդն արդեն անհասանելի էր:

Նաեւ ոստիկանության Արաբկիրի բաժնում էին խարդախության վերաբերյալ հաղորդումներ ստացվել:

Կասկածյալի արտաքին նկարագիրն ու գործելակերպը նույնն էին: Սոցիալական կայքերի միջոցով տեղեկանում էր, որ այս կամ այն քաղաքացին ցանկանում է վաճառել, ասենք՝ իր բջջային հեռախոսը, համակարգիչը կամ ֆոտոխցիկը, զանգում էր, երկկողմանի մուտք ունեցող որեւէ շենքի մոտ հանդիպում էին: Քաղցր խոսքով ու ժպիտով շահում էր վաճառողի վստահությունը, վերցնում նոթբուքը կամ բջջայինը՝ ստուգել տալու պատրվակով մտնում շենք ու մյուս մուտքով անհետանում:

Նման եղանակով անհայտ անձը մի քաղաքացուց բջջային հեռախոսներ ու ֆոտոխցիկ էր հափշտակել՝պատճառելով մեկ միլիոն դրամի նյութական վնաս: Տասնհինգ օր անց մոլորեցնելով մեկ ուրիշին՝ տիրացել էր նրա մեկ միլիոն դրամանոց նոթբուքին, իսկ օրեր անց, դարձյալ վստահությունը չարաշահելով, հափշտակել էր մի քաղաքացուհու հեռախոսը. վնասի չափը 320 հազար դրամ էր:

Վերջին դեպքից մեկ օր անց քրեական հետախույզները, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, հայտնաբերեցին եւ բերման ենթարկեցին կասկածյալին: Հափշտակած իրերը հասցրել էր վաճառել:

Նման մի դեպք էլ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակիցներն էին գրանցել:

Մայրաքաղաքի մի բնակիչ, որը ցանկանում էր Երեւանի կենտրոնական հատվածում ոչ բնակելի տարածք գնել, համացանցով գտել էր փնտրածը, զանգել հայտարարություն տվողին: Հանդիպել, նայել էին տարածքը, սակարկել գինը, համաձայնության էին եկել: Առուվաճառքի համար անհրաժեշտ թղթաբանությունից եւ գումարը վճարելուց հետո քաղաքացին անցել էր ձեռք բերած սեփականությունն օգտագործելուն՝ չպատկերացնելով, որ մոտ 200 հազար դոլարով գնել էր մի բան, որը ոչ թե եկամուտ էր բերելու, այլ՝ բազմաթիվ տհաճություններ ու գլխացավանք: Տարածքը գնելուց հետո, դարձյալ համացանցի միջոցով, տուժողը փորձել էր հարմար վարձակալ գտնել եւ անակնկալի էր եկել, երբ տեսել էր, որ նույն տարածքը մեկ ուրիշն էլ է վարձակալության տվել: Զանգել էր հիշյալ համարով եւ բացատրություն պահանջել, անծանոթը հայտարարել էր, որ այդ տարածքը պատկանում է իրեն:

Միասին այցելել էին նոտարական գրասենյակ եւ տեղում ստացել բոլոր հարցերի պատասխանը՝ ոմն Վարդան տարածքի իրական սեփականատիրոջ հետ կնքել էր վարձակալության պայմանագիր, հետո կեղծել էր եւ վերածել նվիրատվության մասին պայմանագրի, կադաստրով դարձել սեփականատեր ու հիշյալ տարածքը վաճառել էր տուժողին:

Քաղաքացին ոստիկանություն էր դիմել, իրավապահներն էլ հայտնաբերել եւ բերման էին ենթարկել ոմն Վարդանին՝ իրականում՝ Հրանտ Պողոսյանին:

Նման միջադեպերից խուսափելու համար խորհուրդ ենք տալիս քաղաքացիներին՝ պարզապես լինել առավել ուշադիր եւ զգույշ, զերծ մնալ համացանցում տեղադրված կասկածելի առաջարկներից: Միայն այդպես է հնարավոր չհայտնվել խարդախի, խաբեբայի որոգայթում:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Գողություն ու գողության փորձ



**Նոյեմբերի 2-ի լուսադեմին ոստիկանության Կենտրոնական բաժնում ահազանգ էր ստացվել, որ Կողբացու փողոցի սրճարաններից մեկի դուռը կոտրել են ու փորձել գողություն անել:**

**Կենտրոնականի քրեական հետախույզները օպերատիվ միջոցառումների շնորհիվ պարզեցին դեպքի մի շարք հանգամանքներ, որոնց հիման վրա էլ նոյեմբերի 11-ին կասկածանքով բերման ենթարկեցին Սարի թաղում ապրող 22-ամյա մի երիտասարդի: Նա խոստովանական բացատրություն տվեց:**

**Հետագա միջոցառումներով ոստիկանները բերման ենթարկվածի մասնակցությամբ նոր հանցադրվագներ բացահայտեցին: Ըստ քննության այս պահին հայտնի տվյալների՝նա նոյեմբերի 4-ին Հանրապետության փողոցի մի խանութից գողության փորձ էր արել, իսկ Դավիթ Անհաղթի փողոցի մի խանութից՝ գողություն:**

**Կատարվում է քննություն:**

# Հայելամոլը բացահայտվեց



Նոյեմբեր ամսվա տարբեր օրերի ոստիկանության Էրեբունու եւ Քանաքեռ-Զեյթունի բաժիններում մեքենաների կողային հայելիների գողության վերաբերյալ մի քանի ահազանգ էր հնչել: Թիրախը տարբեր մակնիշի մեքենաներ էին: Էրեբունու եւ Քանաքեռ-Զեյթունի քրեական հետախույզները համատեղ օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզեցին, որ գողությունները կատարել է նույն անձը: Շուտով հայտնի դարձավ նրա ինքնությունն ու գտնվելու վայրը: Երեւանի բնակիչ, 36-ամյա տղամարդը նոյեմբերի 12-ին հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանություն եւ խոստովանական բացատրություն տվեց:

Գողացված ու վաճառված հայելիները հայտնաբերելու եւ տուժողներին վերադարձնելու միջոցառումները շարունակվում են:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Հայտնաբերվեցին կարճ ժամանակ անց



**Նոյեմբերի 16-ին, կեսգիշերն անց, ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում էր ստացվել, որ կոտրել են Շիրազի փողոցում կայանված «Միցուբիշի» մակնիշի մեքենայի ապակին եւ գողություն արել:**

**Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ գողացել են վարորդի վերարկուն եւ նրա հարսնացուի պայուսակը, որի մեջ եղել էր հինգ հազար ռուբլի, 160 հազար դրամ եւ անձնագիր:**

**Անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկվեցին: Ձեռք բերված տեղեկությունների եւ փաստերի համադրությունը հուշում էր, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Գուլակյան փողոցի 24-ամյա մի բնակիչ: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Մաշտոցի բաժին:**

**Ավելի ուշ ոստիկանները պարզեցին, որ նա գողությունը կատարել էր Մազմանյան փողոցի 34-ամյա մի բնակչի հետ, որին քրեական հետախույզները նույնպես բերման ենթարկեցին:**

**Նոյեմբերի 13-ին գողացել էին «Զվարթնոց» օդանավակայանի ավտոկայանատեղիում կայանված «Տոյոտա» մակնիշի մեքենայի լուսարձակը: Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվեց, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Տիմիրյազեւի փողոցի 29-ամյա մի բնակիչ: Նոյեմբերի 15-ին նա բերման ենթարկվեց եւ տվեց խոստովանական բացատրություն:**

**Նոյեմբերի 17-ի գիշերը ոստիկանության Դավիթաշենի բաժանմունքում գողության մասին տեղեկություններ ստացվեցին: Քրեական հետախույզների օպերատիվ արձագանքման շնորհիվ կասկածյալին Դավիթաշենի 2-րդ թաղամասից բերման ենթարկեցին: Սարի թաղի բնակիչ էր, 17 տարեկան:**

**Պարզվեց, որ ժամը 4.30-ի սահմաններում նա Տիգրան Պետրոսյան փողոցի ծաղկի խանութից համակարգիչ էր գողացել, իսկ երբ Դավիթաշենի 2-րդ թաղամասի գեղեցկության սրահից էր փորձել գողություն անել, գործն ավարտին չհասցրած՝ ոստիկանները բռնել էին:**

**Բոլոր դեպքերով կատարվում է քննություն:**

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Բնակարանային գողությունը բացահայտվեց



Ոստիկանության Վաղարշապատի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Էջմիածնի 17-ամյա մի բնակիչ բնակարանային գողություն է արել: Ձեռք բերված տեղեկությունների իսկությունը ստուգելուց հետո քրեական հետախույզները կասկածվողին բերման ենթարկեցին ոստիկանության Վաղարշապատի բաժին:

Պարզվեց, որ հոկտեմբերի 18-ին տեխնիկական միջոցների գործադրմամբ նա կոտրել էր Չարենցի փողոցի տներից մեկի դռան փականը եւ բնակարանից հափշտակել հեռուստացույց՝ տանտիրոջը պատճառելով մոտ 250 հազար դրամի գույքային վնաս:

Նախապատրաստված նյութերն ուղարկվել են Վաղարշապատի քննչական բաժին:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Մի՛ գողացիր

***Գողությունը ուրիշի ունեցվածքը յուրացնելն է: Դրանք կարող են նյութական կամ մտավոր արժեքներ լինել: Ամենավտանգավորն այն է, որ մարդը վարժվում է գողություն անելուն եւ հաճախ չի գիտակցում, թե ինչ է անում: Այնուամենայնիվ, այդ ընթացքը հանգեցնում է նրան, որ վաղ թե ուշ սկսում է բացահայտ գողանալ: Դա այսբերգի վերին մասն է, որի դեմ պայքարն անարդյունավետ կլինի այնքան ժամանակ, քանի դեռ չենք գիտակցում, որ զուգահեռաբար պետք է ջանքեր գործադրել այսբերգի ստորին մասի դեմ պայքարի ուղղությամբ: Փորձենք համակարգել երեւույթը՝ըստ բարոյականության չափանիշների եւ օրենսդրության:***

*Քրեորեն պատժելի եւ բարոյական առումով դատապարտելի գողություն:* Առանձին անձանց կողմից կատարվող գողությունը գործնականում դատապարտվում է բոլորի կողմից: Այդ կարգին են դասվում գրպանահատները, բնակարանային գողերը, կողոպտիչները եւ ավազակները:

Ավելի փոքր խմբի կողմից դատապարտվում են ձեռնարկություններից կատարվող գողությունները: Իսկ ամենափոքր «դատապարտելի» խմբում պետությունից գողացողներն են:

*Քրեորեն պատժելի, սակայն, բարոյական առումով, չդատապարտվող գողություն:*

Խոսքը նախեւառաջ պետությունից կատարվող գողությունների մասին է: Գողության ձեւերը տարբեր են. տնտեսական հանցագործություններից մինչեւ հարկերի վճարումից խուսափելն ու ձեռնարկության ունեցվածքը անձնական նպատակներով օգտագործելը: Սովետական իշխանության տարիներին, օրինակ, ոչ ոք չէր մեղադրի բժշկին կամ բուժքրոջը հերթապահության սենյակից ցավազրկող հաբ կամ, ասենք, մի քանի սրվակ գլյուկոզա վերցնելու համար:

Գողության դեպքերը կարելի է բաժանել երկու ենթատեսակի՝ բացահայտված ու չբացահայտված: Բացահայտված գողության վախճանը պատիժն է: Եթե գողությունն աննշան է, իսկ պատիժը՝ թեթեւ, բացառված չէ, որ գողը զղջա եւ այլեւս գողություն չանի: Եթե պատիժը



խիստ է, եւ գողը հայտնվում է կալանավայրում, ապա հնարավոր է, որ այնտեղ «պրոֆեսիոնալ դպրոց» անցնելով՝ դառնա պրոֆեսիոնալ հանցագործ:

Չբացահայտված գողության ելքը կախված է գողի անհատականությունից: Նրանք, ովքեր հակված են հասարակության մեջ լեգալ կյանքով ապրելու, մեկ անգամ անազատության մեջ հայտնվելով, նման հեռանկարի վախից, կարող են երկար տարիներ գողության փորձ չանել: Բայց առավել հաճախ չբացահայտված գողությունը խթանում է հերթական հանցարարքը, որն իրականացնում է առավել մեծ թափով ու պակաս զգուշավորությամբ: Բայց նույնիսկ ամենահաջողակ գողերը մշտապես հուզական լարվածության վիճակում են, ինչի մասին վկայում է նրանց կենսակերպը՝ թմրանյութերի օգտագործում, հարբեցողություն, անկանոն սեռական կյանք: Այս ամենն իրականում ոչ թե հաճույքներ են, այլ որոշակի խթանիչներ, որոնք բթացնում են վտանգի զգացումը, եթե օգտագործվում են փոքր բաժնեչափերով, կամ՝ գիտակցությունը, եթե մեծ չափերով են օգտագործվում:

Քրեորեն ոչ պատժելի, սակայն բարոյական առումով դատապարտելի գողություն: Դրանք հիմնականում մանր գողություններն են: Օրինակ, ամառանոցի հարեւանը կարող է չվերադարձնել վերցրած գործիքը: Գործընկերը կարող է չվերադարձնել պարտք վերցրած փոքր գումարը: Հաճախ նման արարքները որպես գողություն չեն ընկալվում ինչպես գողացողների, այնպես էլ տուժողների կողմից:

Իսկ հիմա փորձենք քննարկել գիտակցման մակարդակները:

Գիտակցված գողությունը այս աստիճանակարգում, թերեւս, ամենապարզունակն է: Դրանով զբաղվում են պրոֆեսիոնալ գողերը: Այստեղ ամեն ինչ ծրագրված է: Առկա է նախնական փուլը, երբ ծագում է գողության գաղափարը, հետո գալիս է պլանավորման փուլը, ապա՝ «նախավարժանքը» եւ բուն գողությունը: «Գործողությունն» ավարտվում է ավարի բաժանումով:

Չգիտակցված գողության օրինակները շատ են: Ոչ ոք, օրինակ, գողություն չի համարում ավտոբուսով մի կանգառ անտոմս երթեւեկելը: Մանր-մունր գողանում են ձեռնարկություններից՝ շինանյութեր, սննդամթերք եւ այլն:

Կա գողության մի տեսակ, որն, ըստ էության, ներառում է բոլոր տեսակները. բոլոր գողությունների դեպքում, ի վերջո, գողանում ես քեզնից: Հարկերը չես վճարում՝ պետությունն աղքատանում է ու չի կարողանում քեզ պաշտպանել: Գողանում ես գործընկերոջից՝ կարող ես կորցնել թե՛ նրան, թե՛ հեղինակությունդ:

Ամենավտանգավորը անպատիժ մնացած գողությունն է. մարդը կորցնում է ինքնահսկումն ու հայտնվում հանցագործության որոգայթում: Առավել ծանր է գողացողի, քան տուժողի ճակատագիրը: Գողացողը վճարում է ազատությամբ, քրեորեն ոչ պատժելի արարքի դեպքում՝ հոգեբանության աղճատումով, բարոյական չափորոշիչների կորստով, ի վերջո, ինքն իրենից գողություն կատարելու ծանր գիտակցությամբ:

# Հայտնաբերվել են հետախուզվողներ




Ոստիկանության Ստեփանավանի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 23-ին «Զվարթնոց» օդանավակայանից ոստիկանության Ստեփանավանի բաժին է տեղափոխվել Հայաստան վերադարձած 43-ամյա Վիրաբ Մ.-ն, որը ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի (Կաշառք տալը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Նաիրիի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 23-ին Փարիզ-Երեւան չվերթով Հայաստան է վերադարձել 35-ամյա Զավեն Կ.-ն, որը 2017 թ. օգոստոսից ոստիկանության Նաիրիի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 332-րդ (Արդարադատության իրականացմանը եւ քննությանը խոչընդոտելը) հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Կումայրիի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 24-ին Մոսկվա-Գյումրի չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Շիրակ» օդանավակայանից բերման է ենթարկվել 38-ամյա Սերգեյ Ս.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի (Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզների բացատրական աշխատանքի շնորհիվ նոյեմբերի 23-ին Ռուսաստանից ոստիկանության Շենգավիթի բաժին ներկայացել է 35-ամյա Գուրգեն Ա.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 117-րդ (Դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելը), 118-րդ (Ծեծը) եւ 137-րդ (Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը) հոդվածների մեղադրանքներով:

◆

Ոստիկանության Ստեփանավանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 22-ին Ստեփանավան քաղաքի 4-րդ միկրոշրջանում հայտնաբերվել եւ բերման է ենթարկվել 20-ամյա մի երիտասարդ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի (Պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության ՔՀԳՎ, Շիրակի մարզային վարչության եւ Կումայրիի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 22-ին Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոցում հայտնաբերել եւ բաժին բերման են ենթարկել 28-ամյա տղամարդու եւ 24-ամյա մի կնոջ, որոնք սպանության մեղադրանքով գտնվում էին միջազգային հետախուզման մեջ:

◆

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքի շնորհիվ նոյեմբերի 22-ին բաժին է ներկայացել 58-ամյա մի տղամարդ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (Գողությունը) մեղադրանքով:

# Գողությունը բացահայտվեց



Նոյեմբերի 8-ին Շիրակի մարզի Մեղրաշատ գյուղի մի բնակիչ ոստիկանության Ամասիայի բաժնում հաղորդում էր տվել, որ անհայտ անձը «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում կոտրել է որպես պահեստարան ծառայող իր վագոն-տնակի դուռը եւ գողացել կենցաղային իրեր, մետաղական կոնստրուկցիաներ ու շինանյութ:

Հետաքննություն իրականացնող մարմինը տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեց՝ դեպքի վայրի զննությունից մինչեւ օպերատիվ հարցումներ: Քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Ջաջուռ գյուղի 30-ամյա մի բնակիչ: Նոյեմբերի 10-ին կասկածվողը բերման ենթարկվեց ոստիկանության Ամասիայի բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Գողոնը հայտնաբերվել է:

Նախապատրաստվում են նյութեր:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Ոստիկանության բացահայտումներից



Նոյեմբերի լույս 15-ի գիշերը ոստիկանության Շենգավիթի բաժնում մեքենայի առեւանգման վերաբերյալ հաղորդում ընդունվեց: Մի տղամարդ, օգտվելով այն հանգամանքից, որ «Մերսեդես»-ի վարորդը մի պահ իջել է մեքենայից, փախցրել էր այն:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները սկսեցին օպերատիվ միջոցառումներ ձեռնարկել «Մերսեդես»-ը փախցրած անձի ինքնությունը պարզելու, նրան ու մեքենան հայտնաբերելու ուղղությամբ: Շուտով պարզվեց, որ Արշակունյաց պողոտայի եւ Շիրակի փողոցի խաչմերուկում «Մերսեդես»-ը վթարվել է: Պարզվեց նաեւ այն փախցրած անձի ինքնությունը: 30-ամյա տղամարդը, որը վթարից հետո հեռացել էր դեպքի վայրից, բացատրական աշխատանքի արդյունքում ներկայացավ ոստիկանության Շենգավիթի բաժին ու խոստովանական բացատրություն տվեց:

Դեպքի հանգամանքները քննությամբ պարզվում են:

Կատարվում է նախաքննություն:

# Մինչ կահազանգեին՝ գողը բռնվեց

Ոստիկանության Արարատի մարզային վարչության գործընկերների հետ օրեր տեւած հետախուզական միջոցառումների շնորհիվ Արտաշատի բաժնի քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ Նոյակերտ գյուղի մի բնակիչ նոյեմբերի 18-ի լուսադեմին Արտաշատ քաղաքի տներից մեկից գողություն է արել:



Բնակարանային գողությունից մեկ ժամ էլ չանցած՝ Արտաշատի ոստիկանները 2018 թ. նոյեմբերին համաներումով ազատ արձակված 38-ամյա կասկածյալին հայտնաբերեցին:

Այդ ընթացքում բնակարանատերն արդեն ահազանգել էր 1-02 ու հայտնել, որ բնակարանից պարանոցի շղթա եւ փող են գողացել՝ չիմանալով, որ ոստիկաններն արդեն բացահայտել են հանցագործությունը:

Բերման ենթարկվածի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է իրեղեն ապացույց հանդիսացող շղթան:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:




## Ուշադրություն

### Հարգելի քաղաքացինե՛ր

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

## Աստղագուշակ

### 29.11 - 05.12



**Խոյ** - Շատ բան կախված է ձեր արագ որոշումներ կայացնելու եւ գործելու ունակությունից:

**Ցուլ** - Պետք չէ կարծել, որ նպատակներին կհաջողվի արագ հասնել: Ճիշտ հակառակը կլինի:

**Երկվորյակ** - Աստղերը սատարում են ձեզ բազմաթիվ նախաձեռնություններում, եւ դրանից արժե օգտվել:

**Խեցգետին** - Հնարավոր են խնդիրներ այնտեղ, որտեղ չեք ակնկալում: Պետք է ջանքեր գործադրեք:

**Առյուծ** - Շատ բան կախված կլինի նրանից, թե որքան արագ կարող եք շտկել ձեր սխալները:

**Կույս** - Հավանական են գործնական առաջարկներ: Փորձում եք արագ հասնել ձեր նպատակներին:

**Կշեռք** - Պետք է կարեւոր որոշումներ կայացնեք՝ ունենալով նվազագույն ինֆորմացիա:

**Կարիճ** - Ձեզ սպասում են հաճելի անակնկալներ, հաջող զուգադիպություններ:

**Աղեղնավոր** - Գործերի ուշացումը խանգարում է ժամանակին սկսածը ավարտին հասցնել: Ում վրա սովոր եք հույս դնել, չեն աջակցի:

**Այծեղջյուր** - Կգտնեք այնպիսի մարդկանց, ովքեր ցանկացած պարագայում ձեր կողքին կլինեն: Ինտուիցիան անսխալ հուշում է՝ ում կարելի է վստահել:

**Ջրհոս** - Պետք չէ հույս ունենալ, որ արագ հաղթանակ կտանեք կամ կլուծեք բարդ խնդիրները:

**Ձուկ** - Հնարավորություն կունենաք ուղղել հին սխալները եւ հանդես գալ նոր գաղափարներով եւ ծրագրերով:

## Փորձեք լուծել

**Խնդիր N1**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից**

**Խնդիր N2**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից**

**Նախորդ խնդիրների պատասխանները**

Խնդիր N1 1.g5-f6 e7:g5 2.h6:d2x

Խնդիր N2 1.d2-e3 g1:d4 2.b8-d6 c5:e7 3.d8:a1x

Պատրաստեց
**Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

## Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 28.11.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: